ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<<05>> Նոյեմբերի 2024թ. N ՄՈ/521 -Ա

ք. Արմավիր

«ԹԱԻՐՈՎԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՄԱՐԻՆԵ ԲԱՂՈՒՄՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 160-րդ, 163-րդ և 164-րդ հոդվածներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 1-ին կետը և Մարինե Բաղումյանի 2024 թվականի նոյեմբերի 5-ի դիմումը.

ո ր ո շ ու մ ե մ՝

1. «Թաիրովի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Մարինե Բաղումյանին տրամադրել ամենամյա հերթական երկարացված արձակուրդի մասը 2024 թվականի նոյեմբերի 6-ից դեկտեմբերի 3-ը ներառյալ՝ 20 աշխատանքային օր տևողությամբ:
2. Մարինե Բաղումյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում «Թաիրովի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության

տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել «Թաիրովի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ուսումնական աշխատանքի գծով տեղակալ Սաթենիկ Պետրոսյանին:

3. «Թաիրովի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի տեղակալ Սաթենիկ Պետրոսյանի աշխատավարձի վճարումը 2024 թվականի նոյեմբերի 6-ից դեկտեմբերի 3-ը ներառյալ իրականացնել տնօրենի պաշտոնային դրույքաչափին համապատասխան:
4. Մարինե Բաղումյանին աշխատանքի մեջ համարել 2024 թվականի դեկտեմբերի 4-ից:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

2024-11-05 [illegible] GMT+4
Հավաստագրի տիրոջից

ՄԱՐԶՊԵՏ՝ **Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ**